Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Երևանում մասնակցեց <<Եվրոպական միություն-Եվրոպական հարևանություն-Ռուսաստան. Տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում անդրսահմանային համագործակցություն >> ծրագրի շրջանակներում կազմակերպված երկօրյա սեմինարին 14.11.2013-15.11.2013

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը աշխատանքային գործնական այցով գտնվում էր Վրաստանի Հանրապետությունում 11.11.2013-13.11.2013

Նոյեմբերի 11-ից 12-ը Թբիլիսիում մասնակցել է <<Եվրոպական քաղաքների ցանց>> ծրագրի շրջանակներում համագործակցությունների ներկա իրավիճակի և առաջիկա անելիքների քննարկմանը (հաջողակ փորձի արտահանում և ներմուծում), որտեղ հանդես եկավ ելույթով: 11.11.2013-12.11.2013

Նոյեմբերի 13-ին Թբիլիսիում մասնակցել է <<Թբիլիսի 2030 ռազմավարական ծրագրի>> ներկայացման շնորհանդեսին, որտեղ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը հանդես է գալիս որպես գործընկեր: 13.11.2013

Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Երևանում մասնակցեց <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության կողմից ձեռնարկված <<Աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունք>> Հաշմանդամություն ունեցող երիտասարդների կենսապայմանների բարելավում՝ զբաղվածության հնարավորությունների մեծացմամբ ՀՀ Տավուշի մարզում>> ծրագրին
07.11.2013

Մարզպետի տեղակալը հանդես է եկել բացման խոսքով և ելույթով: Իր ելույթում նշել է ծրագրի կարևորության և դրա իրականացմանն աջակցելու պատրաստակամության վերաբերյալ:

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ղեկավարած պատվիրակության Դիլիջանի միջազգային դպրոց պաշտոնական այցին 05.11.2013

Այցի շրջանակներում ԱԺ նախագահը ծանոթացավ միջազգային դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքին, և եղավ Գոշավանքում, որի բակում վերջերս տեղադրվել էր միջնադարի հանճարեղ մտածող, օրենսդիր ու առակագիր Մխիթար Գոշի բրոնզաձույլ արձանը: